



ԻԳՆԱՏԻՈՍ ՍԱՐԿԱՎԱԳ ՄԱՐՏԻՐՅԱՆ

ՉԵՔԵԼ-ՄՈՒՍԱՑԻ ԲԱՐՐԱՌԷ՝

4. ԵՐԿԲԱՐՐԱՌՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

ԱՅ

61. Հին հայերենի այ երկբարբառը միավանկ բառերի բառասկզբում Ջերել-Մուսայի բարբառում կորցնում է յ կիսաձայնը և դառնում ա. այծ — աձ, այս — աս, այդ — աո, այն — աե, այլ — ալ:

62. Բազմավանկ բառերի բառասկզբում այ դառնում է ի, կրկնվում է հաջորդող բաղաձայնը. այգի — իփֆա, այծեր — իձձիր:

63. Միավանկ բառերի բառամիջում այ երկբարբառի յ կիսաձայնը ընկնում է, դառնում է ա. կայծ — գաձ, փայտ — փադ, մայր — մար, ձայն — ձան, լայն — լան, գայլ — կ'ալ:

64. Բազմավանկ բառերի բառամիջում այ դառնում է ի, երբեմն կրկնվում է հաջորդող բաղաձայնը. կայծակ — գիձձիփ, պայծառ — բիձձուռ, փայտեր — փիտօնֆ, հայելի — հիլիլա, կայծեր — գիձձիր, հայել — հիլիլ:

65. Բառավերջում այ երկբարբառը դառնում է օ. չուխայ — չուխօ, փեսայ — փիսօ, տղայ — դլօ, սատանայ — սադանօ, բակլայ — պագլօ:

Ինչպես երևում է, այստեղ այ ձայնափոխվում է ոչ թե որպես երկբարբառ, այլ որպես բառավերջի ա ձայնավոր (հմմտ. § 15):

Այս դեպքում որոշյալ հոգ ստանալիս նորից ի հայտ է գալիս այ երկբարբառը, որտեղ ընկել է յ կիսաձայնը. սատանայ — սադանօ — սադանան (որոշյալ), տղայ — դլօ — դլան (որոշյալ), փեսայ — փիսօ — փիսան (որոշյալ):

66. Այր բառը դադարելով ընդհանուր գործածությունից, հանդես է գալիս միայն բարդ բառերի մեջ, այր — առ ձայնափոխմամբ.

հուրբրար — հօր + ֆոյր + այր = հորաբրոջ ամուսին, մուրբրար — մօր + ֆոյր + այր = մորաբրոջ ամուսին, սգբարար — սկեսուր + այր = սկեսրոջ ամուսին:

67. Կայանալ բայը որպես բացառություն ընդհանուր թրենքից, դառնում է գայնիլ (կանգնիլ), կամ նաև սովորական ձայնափոխմամբ գինիլ (լինիլ) բայը այլ իմաստով:

ԱԻ

68. Այ երկբարբառը ձայնավորներից առաջ դառնում է ալ. ալել — ալիլ, խալիժ — խալեզ, հալանել — հալնիլ, լալանալ — լալնիլ, բազաուր — բաֆալիւր, ալելի — ալիլա:

Այ դառնում է ալ. աալ — ալալ: Երբեմն ալ երկբարբառի ա ձայնավորը ընկնում է, դառնում է վը, վ. ծարաւել — ծարվընիլ, պառաւել — բառվիլ, առաւօտուն — առվըղօն:

69. Վերջին վանկում ալ դառնում է ուլ. ծարաւ — ծարուլ, պառաւ — բառուլ, կաֆաւ — գաֆուլ, կտաւ — գդուլ, հաւ — հուլ, ցաւ — ցուլ:

70. Բաղաձայնից առաջ շեշտյալ ալ (օ) դառնում է ու. աղօբֆ — աղուրֆ, հօսբր — հուսբր, աեօթի — աեուրա, աթօր — առուր, մօրուֆ — մուրօֆ, օձ — ուձ, խելօֆ — խիլիֆ, օղ — ուղաֆ, օթօրել — ուրբիլ, օրհնել — ուշնիլ:

Յօնֆ բառը, որը բարբառում եղակիրավ չկա, հոգնակիում դառնում է ունֆվա:

71. Ինչպես նկատելի է, ալ երկբարբառը մեծ մասամբ ձայնափոխվում է բարբառում ոչ թե որպես երկբարբառ, այլ որպես մի ձայնավոր և մի բաղաձայն — ալ. միայն § 70-ում այն ձայնափոխվում է որպես երկբարբառ:

1. Շարունակված ամսագրի 1952 թվականի մարտի և 1953 թվականի փետրվարի համարներից:

նԱ

72. Հայերեն բառերի բառակազմում չի պատահում, օտարներից փոխառյալ բառերի բառակազմում էա դառնում է յա. եախնի — յախնօ, եարալի — յարալա, եարաբ — յարապ:

73. Բառամիջում եա դառնում է ի. կորեակ — գիրիկ, լեառ — լիռ, ցոռեան — ցիրին, սեամ — շիմֆ, վառեակ — վառիֆ, փրեանֆ — փրինֆ, փրեանց — փրինց:

Այստեղ էլ նկատելի է, որ եա ձայնափոխվում է ոչ թե որպես եա (յա) երկբարբառ, այլ որպես ե ձայնավոր:

74. Ուրիւն վերջավորվող բառերի — ուրեան սեռական հոլովը, ինչպես նաև — եալ դերբայները պակասում են քաղաքացից. գործածվում է ած — ուծ դերբայաձևը:

նԱԻ

75. Բառակազմում պատահող եարբն — եօրն բառում եալ դարձել է յու. յարբն — յուրբն:

Բառերի միջում եալ դարձել է իվ. սեալ — սիվ, բարեալ — պարիվ, առաջեալ — առջիվ:

նԻ

76. Թե՛ բառամիջում և թե՛ բառավերջում եալ դարձել է իվ և երբեմն էլ վ. քերեալ — քիրիվ, արեալ — արիվ, ձեալ — ձիվ, քեալ — քիվ, ներեալ — ներիվ, երեալ — երվընիվ, ձեեալ — ձիվիվ:

77. Պատահող երկու օրինակների մեջ իայ երկբարբառը տարբեր ձայնափոխումներ ունի. լուրիայ — լուպիա (լորու մանր տեսակը) (իայ — իա), կրիայ յուրահատուկ ձևով դարձել է գուրյուլ (իայ — յուլ):

նԻ

78. Բառակազմում պատահող օրինակների մեջ իւ (յու) երկբարբառը դարձել է ի, կորցրել ւ տառը. իղ — իղ, փրեանֆ — փրինֆ, փրեանց — փրինց, փր դարձել է փ (իւ — է):

79. Միավանկ բառերի բառամիջում իւ դառնում է ալ. ձիւն — ձալն, սիւն — սալն, նիւս — հալս, ձիւր — ձալր:

Այս օրենքին է հետևում նաև բազմավանկ աղբիւր — ախպալր բառը:

80. Բազմավանկ բառերի բառամիջում իւ դառնում է է. ալիւր — իլէր, հարիւր — հարէր, արիւն — վիրէն:

81. Ղ բաղաձայնից առաջ իւ դառնում է ի. գիւլ — կիղ, գիւլացի — կիղացա, ծիւղ — ծիղ, իւլ — իղ: Բացառություն է կազմում նիւլ — չօղ բառը, որտեղ ղ-ից առաջ իւ դարձել է օ:

82. — ուրիւն վերջացող բառերի մեջ իւ դարձել է է. մեծուրիւն — միեծութէն, — իշուրիւն — իշութէն — բարձուրիւն — պանցրու-

քէն, լաուրիւն — լաութէն, խեուրիւն — խիւրէն, մայուրիւն — միրութէն:

83. Բառամիջում կամ բառավերջում ձայնավորներից առաջ իւ դառնում է իվ. նիւանդ — նիվունտ, նիւանդանալ — նիվըննիլ, ջիւ — ջիվ:

84. Կիւրակէ և միւոն բառերի մեջ իւ դարձել է ի. կիւրակէ — գիւրակէ, միւոն — միոն:

ՈՅ

85. Բառակազմում չի պատահում, բառամիջում ոչ երկբարբառը դարձել է ալ. լոյս — լալս, բոյս — պալս, բոյն — պալն, բոյլ — քալլ, բոյր — քալր, բնկոյզ — ունֆալզ, հանգոյց — հանկալց, կոյր — գալր:

86. Հետևյալ բառերի մեջ ոչ դարձել է է. պատռոյս — բաղրէս, գրոյց — գրէց, սովորոյթ — սուրվէթ: Բացառություններ են՝ անոյշ — անօշ (ոյ — օ), երեկոյ — իրիգօն (ոյ — օ), գրականից փոխառյալ կոյս — գոյս բառը:

87. Ուս երկբարբառը դառնում է ու. Աստուած — Ասդոն, դժուար — դիժուր, սակայն տուալ — իղօր (անկանոն փոխարինում):

88. Ուս դառնում է վա, վու, վը. լուացֆ — ըվուսֆ, լուանալ — ըվաննիլ, շուան — չվուն, լուացուել — ըվացվիլ, իրիկուան — իրիգվուն (ընթրիք), երէկուան — իրիվուն:

89. Ուն, ուի, ուօ սակավադեպ երկբարբառները դառնում են վն, վի, վօ, վը. բեկկնի — պիվգինա, կոսուել — գուսըվիլ, բրուել — բրվիլ, քրուել — քրվիլ:

ՈՎ

90. Ով երկբարբառը սովորաբար դառնում է ուվ. կով — կուվ, ծով — ծուվ, բառով — պարով: Ով դերանունը դառնում է ուվ, իսկ հոլովվում է որպես ու Դարաբերականը:

91. Գործիական ով վերջավորությունը շատ անհշան բացառությամբ Հաջի—Հաբիրլիի մասնաճյուղում դարձել է ում, իսկ մյուս գյուղերում՝ ուվ (Յողուն—Օլուրի մասնաճյուղ) և օն (Քեսարի մասնաճյուղ):

նգրակացություն

92. Երկբարբառների ձայնափոխումը պարզ ցույց է տալիս, որ Զերել—Մուսայի բարբառում, ինչպես նաև մեր մյուս բարբառներում, առհասարակ նկատվում է ձրգտում երկբարբառների հնչյունային պարզացման և հնչյունական հեշտության համար: Հատկապես կրճատված է ւ տառով կազմված երկբարբառների շարքը, որոնց արտասանությունը դժվարությունների հետ է կապված, և դիտվում է որպես վ բաղաձայն մեծ մասամբ:

Պատահող յա, այ երկբարբառները կա՛մ արդյունք են տարաներից կատարված փոխանություն (յա) կա՛մ հեշտացումն են ավելի դժվարահնչյուն երկբարբառների (ոյ — այ, իւ — այ):

Երկբարբառները շատ հաճախ վերածվում

են մի ձայնավորի և մի բաղաձայնի՝ հնչման հեշտություն համար:

Բարբառում գործածական է իւ երկբարբառը, որը դադարել է երկբարբառ լինելուց, այլ գործ էածվում որպես մի ձայնավոր (Ֆրանսիական և հնչյունը):

5. ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Բ

93. Բ թրթռուն բաղաձայնը Զեբել — Մուսայի բարբառում դառնում է պ. բոյս — պայս, բուսնիլ — պուսնիլ, բեբել — պիբիլ, բամբակ — պամպուկ, բանել — պանիլ (աշխատել), բոյն — պայն, բանալի — պալէնի, բարև — պարիվ, բուրդ — պօրք, բան — պուն, բզեզ — պզիզ, բերան — պիրուն, բարձր — պունցր և այլն:

94. Բառակցքում կան մի քանի բառեր, որոնք բ դառնում է փ. բորբոս — փրփիս, բորբոսել — փրփրօթիլ, բուրվառ — փրվառ:

95. Բառամիջում բ դառնում է փ երբ ազատ է. արեք — ամիրք, խարել — խամիրդիլ, շաբաք — շամուք, շաբաք օր — շամիաքուր, ուրբաք — ուրփուք, սրբել — սրփիլ:

96. Բառամիջում մ ընդականից հետո բ դառնում է պ. բամբակ — պամպուկ, ամբար — ամպուր, ամբիոն — ամպիոն:

97. Բառամիջում դ բաղաձայնից հետո բ դառնում է պ. զաբիր — խապայր, եղբայր — խապար:

98. Բառավերջում բ դառնում է փ. երբ — յիփ, սուրբ — սօրփ, Մեսրոբ — Մեսրոփ, նուրբ — նօրփ, Զենոբ — Զենոփ:

Առանձին ձայնավորիսման արդյունք է բռիկ բառը, որը դարձել է պիգաֆ, որտեղ բառավերջի կ — ֆ բաղաձայնի ազդեցությամբ բառամիջի բ դարձել է կ — ֆ:

Գ

99. Գ բաղաձայնը բառակցքում դառնում է կ կամ կ'. գիպ — կ'իդ, գիշեր — կիշիր, գարի — կարա, գինի — կինա, գտանել — կ'ըննիլ, գողանալ — կոպնիլ, գօտի — կուդա, գեղեզման — կըրգզմուն, գարուն — կ'արօնի, գետին — կ'իդեն:

100. Գ բաղաձայնը բառամիջում դառնում է ֆ. այգի — իֆֆա, հագանել — հաֆնիլ, հոգի — հիֆֆա, պագանել — փաֆնիլ, գալ — ուֆիլ (ակցքում ավելացել է ու), քագաուր — քաֆալիւր, սգաուր — սրֆալիւր:

101. Բառամիջում կամ բառավերջում և ընդաձայնից հետո գ դառնում է կ կամ կ'. մանգաղ — մանկիպ, հանգույց — հանկ'այց, փոնգտալ — փոնրեկդիլ, հինգ — հէնկ, եղունգ — դօնկ, ժանգ — ժանկ:

102. Բառավերջում եթե գ բաղաձայնին չի նախորդում և ընդականը, ապա գ դառնում է ֆ. ուրագ — ուրիֆ, նրագ — ջըրիֆ, զոյգ — զայֆ, պատարագ — բադարիֆ:

103. Երբ գ (կամ կ) գտնվում է երկու և ընդականների միջև, ապա դառնում է յ, ընդ որում ընդհանում է և մի և ընդականը. կանգնել — գայնիլ, կանգնած — գայնուծ, անկանել — իյնիլ, ցնկնել — ձիյնիլ:

Այս երևույթը նույնն է նաև Պոլսի բարբառում:

Դ

104. Դ բաղաձայնը բառակցքում մնում է դ. դառնալ — դառնիլ, դուն — դօն, լուղալ — դուղիլ, դանակ — դանիֆ, դարտակ — դարդիֆ, դուռ — դօռ, դնել — դնիլ, դժուար, — դիժուր, դե — դիվ և այլն:

105. Դարման բառը «հնար, ճար, դեղ» իմաստով դառնում է տարմուն, իսկ «անասնի կեր» իմաստով դառնում է դարմուն, դաս բառը դառնում է քուս:

106. Դդում բառը պահելով հանդերձ իր դ հնչյունի երանգը երկու տեղ, որոնց մեջ ներմուծվել է ր, իսկ դ և ու տառերի մեջ ներմուծվել է ք. դդում — դդքօմ:

Բառամիջում անկախ դ պահում է իր երանգը. զադրել — դադրիլ (հոգնել):

107. Դ բաղաձայնը և ընդականից հետո թե՛ բառամիջում և թե՛ բառավերջում դառնում է տ. պինդ — բենտ, սանդ — սունտ, սնդուկ — սնտօֆ, գնդան — գնտուն, հիւանդ — հիվունտ, խնդալ — խնտիլ (ուրախանալ), խնդրել — խնտրիլ (բարիք մաղթել), բարեկենդան — պարգընտինիֆ:

Այս օրենքին է հետևում և այդ — առ բառը:

108. Թե՛ բառավերջում և թե՛ բառամիջում ր բաղաձայնից հետո դ դառնում է ք. մարդ — մուրք, վարդ — վուրք, բուրդ — պօրք, վարդավառ — վարքիվառ, երդումն — ուփքօմ, վարդապետ — վարքաբիդ, կարդալ — գարքիլ, արդար — արքուր:

Այս օրենքին է հետևում և խեղդել — խըխքիլ բառը:

2. Տե՛ս ախդեմիկու 2. Աճառյան, «Քննություն Պոլսի բարբառի», Երևան, 1947 թ., էջ 53—54, § 84:

2

109. Զ. բաղաձայնը բառասկզբում մնում է զ. զատիկ — զաղախ, զնղան — զնտուն, զոալ — զրոտիկ, զոյգ — զայլ, զրոյց — զրէց, զենուլ — զրենիլ, զարկանել — զարգիլ: Բացառութիւն է զատ բառը, որը գործ էածվում նախադիրով՝ զատ — իզգույզ (կրկնվել է զ տառը), սակայն բայը լինում է զատել — զաղիլ:

110. Բառամիջում զ նույնպէս մնում է զ. ազատել — ազաղիլ, զերեզման — կրքրզմուն, զգել — կ'գիլ, լեզու — լիզգո, լեզուանի — լիզվանա, հազալ — հազգիլ, հազար — հազգուր, վազել — վազգիլ (մի տեղից թռչել):

111. Բառավերջում նույնպէս զ մնում է անփոփոխ. խոզ — խիւզ, հազ — հուզ, մազ

— մուզ, քնկոյզ — ունեալուզ, քուզ — քոզ, խլէզ — խլիզ, վիզ — վէզ:

112. Մասնավոր պարագաներ են. զանգալ — ժամբուր = եկեղեցու զանգ (զ — ժ), զանգահարել — ժամբրել = եկեղեցում զանգահարել (զ — ժ), երազ — իրուն (զ — ձ) կա և իրուզ, ազոխ — ածծիխ = հասած խաշող (զ — ձ):

Թ

113. Թ. բաղաձայնը բառասկզբում մնում է անփոփոխ. քրու — քրքրօ, քրունի — քրքվի, բոյլ — բայլ, բարավել — բարխիլ, բագաւոր — բախվիւր, բաղել — բաղիլ, բուզ — բօզ, բաց — բուց, բանձ — բունցր:

114. Թռչել բայը բռնելի հետ շփոթելու համար ստացել է ուրիշ ձայնափոխում. քրչել — դրչել, բռնել — բրռոփ:

115. Բառամիջում ք անկախ լինելու կամ կրկնվելու դեպքում մնում է ք. քրու — քրքրօ, քերէ — քիքիվ, անօրի — անուրա, նայքել — չիքիլ, քրունի — քրքվիլ, կարել — զարքիլ, քրան — քրքրուն:

116. ուրիւն վերջացող վերացական գոյականակերտ մասնիկի մեջ ք մնացել է անփոփոխ, մեծուրիւն — մինցուրեն, խնուրիւն — խիվուրեն, բարձուրիւն — պանցուրեն, մայրուրիւն — միւրուրեն:

117. քս բարբառում դարձել է քց. կա միայն մի օրինակ՝ վարսուն — վարցոն:

Յուրահատուկ ձայնափոխումներ են երկու շաղկապներ. քէ — դը, քոզ — դըզ (ք — դ):

118. Թե՛ միավանկ և Թե՛ բազմավանկ բառերի բառավերջում ք մնում է անփոփոխ. կար — գուր, կար — գէր, քուր — քօր, ձիւր — ձայր, մուր — մօր, արծար — արգուր, երկար — իրգուր, ուրբար — ուրփուր, քուլք — քօլք:

119. Ժ. բաղաձայնը բառասկզբում մնում է անփոփոխ. ժանգ — ժանկ, ժողովել —

ժողովիլ (կա նաև նօղվիլ), ժամ — ժում (եկեղեցի), ժամանել — ժմնիլ (շախարաված մի բանի վրա հասնել), ժամանակ — ժամանիւք, ժամակոչ — ժամկիւց:

120. Բառամիջում ժ մնում է ժ. բաժին — պիժեն. արժել — իժիլ, բաժանել — պիժնիլ:

121. Բառամիջում ժ դարձել է ճ հետևյալ բառերի մեջ. վարժապետ — վարճաբիլ, վարժունի — վարճունի, մժեղ — մուջօփ:

122. Բառավերջում հազվադեպ պատահող բառերում ժ մնում է անփոփոխ. ժած (երկրաշարժ):

123. Բացառութիւն է՝ ժայռ — շեռ (ժ — շ), պատիժ — բաղիջ (ժ — շ):

Լ

124. Բառասկզբում Լ բաղաձայնը մնում է անփոփոխ. լոյս — լայս, լեզու — լիզգօ, լայն — լան, լեռան — լեռ, լակոտ — լագիտ, լուսանալ — լուսնիլ, լաց — լուց, լեղի — լիղա, լակել — լագիլ, լու — լօ, լծել — լրծելի, լուծ — լօծ և այլն:

125. Մի խումբ բառեր, որոնք սկսում են Լ բաղաձայնով, հնչման հեշտութեան համար, հատկապէս եթե հաջորդ տառը բաղաձայն է, սկզբից մի ուրիշ ձայնավոր են քնդունում. ու՛ լալ — ուլիլ, կատարյալը՝ լացաւ. ր՛ լուացք — րվուս, լուանալ — րվանիլ, լուացուն — րվացվիլ, լիք — րլլաք:

Իսկ առհասարակ Լ-ով սկսվող բառերի սկզբում նկատելի է ք թեթև հնչյունը:

126. Թե՛ բառավերջում և Թե՛ բառամիջում Լ մնում է անփոփոխ. ոջիլ — իշէլ, աւել — ալիլ, քայլել — քիլիլ, բոյլ — բայլ, ծալել — ծալիլ, խելք — խիլք, խլէզ — խլիզ, գայլ — կ'ալ:

Այդ, ալ ձայնափոխվելիս վերջում ստանում են ա, ւ, է ձայնավորներից մեկը. ալէ, ալա, ալա:

127. Անցյալ դերբայի եալ վերջավորութեան Լ դառնում է ւ. սիրեալ — սիրիւ, մոռացեալ — մառցիւ, գնացեալ — կ'ացիւ, խօսեալ — խօսիւ:

Խ

128. Խ. բաղաձայնը բառասկզբում մնում է անփոփոխ. խաբել — խափիլ — խափրդիլ, խաճանել — խազնիլ, խառնակել — խառնկիլ, խալիժ — խալվէզ, խնծոր — խնծիւր, խմել — խմիլ, խոզ — խիւզ, խոշոր — խիւշիւր և այլն:

129. Բառամիջում Խ մնում է անփոփոխ. քարախել — քարխիլ, ծախել — ծախիլ, կոխել — զիխիլ (խփել), կախել — զախիլ:

վախենալ — վախելի, մոխիր — մախիւէր, անխելք — անխիլք:

Բառամիջում բաղաձայնների տեղափոխում է կատարվել աշխարհ — ախշուր բառի մեջ, խ եկել է շ-ից առաջ:

130. Բառամիջում խ մնում է անփոփոխ. սոխ — սիվս, քացախ — քացիվս, մոխ — մօխ, բարախ — բարիվս, վախ — վիվս, զլուխ — կ'օխ:

Մ

131. Մ բաղաձայնը բառասկզբում ունի երկու երանգ. մնում է ծ կամ դառնում ձ, որն ափսիս հաճախակի է. ծ — ձ՝ ծառ — ձուռ, ծալել — ձալլիլ, ձուլ — ձուվ, ձախել — ձախիլ, ձայր — ձարք, ձակել — ձաֆիլ, ձակ — ձօք: ձ — ձ՝ ձոց — ձից, ձունկ — ձօնկ, ձագել — ձիքիլ, ձաղիկ — ձաղաֆ, ձաղկել — ձաղգիլ, ձեծ — ձիծ, ձեծել — ձիծիլ, ձեփել — ձիփիլ, ձիւռ — ձիրդ:

132. Բառասկզբի ծ բաղաձայնը գ է դարձել հետևյալ բառերի մեջ. ծառագարդար — գարգարուր (ազդվել է հաջորդ գ-ից), ծաւր — գունտր, ծաքիւն — գիքիւն (ազդվել է թյուրքերենից):

133. Բառամիջում ծ դառնում է ձ. ձիծաղել — ձիծաղիլ, ձեծել — ձիծիլ, լծել — լծիլ, ածու(ք) — ածօք, ածելի — ածիլա, ածել — ածիլ, ծածկել — ձաձգիլ:

134. Բառամիջում ծ — գ է դարձել հետևյալ բառերի մեջ. արծաթ — արգուր, հեծանել — հիգելի, խածանել — խագելի: Գործածվում են նաև արծուր, հիծելի, խածելի ձևերը:

135. Բառավերջում ծ դառնում է ձ. ցած — ցուծ, ծիծ — ձէծ, աւիծ — աւէծ, մեծ — միւնծ, Աստուած — Ասղուծ, կերած — գիրուծ, տուած — դրվուծ:

136. Բառավերջում ծ մի բառի մեջ դարձել է գ. խաւիծ — խալէգ:

137. Ժգ վերջավորութունը բարբառում դառնում է սֆ. լուծֆ — լօսֆ, կուրծֆ — գօրսֆ, (գործածվում է նաև գօրծֆ ձևը), խնդրուածֆ — խնարվուածֆ:

Կ

138. Բառասկզբում կ բաղաձայնը դառնում է գ կամ գ՝. կաղնի — գաղնա, կանչել — գիւնչիլ, կով — գով, կարմիր — գ'արմէր, կանգնել — գայնիլ, կծու — գրծօ, կշռել — գ'իշռիլ, կարդալ — գարքիլ, կարկուտ — գ'արգօղ:

139. Բառամիջում կ դառնում է գ. ականչ — ագանչ, երկնյո — իրիգօն, փակել — փագիլ,

երկայն — իրգան, սատակել — սաքգիլ, հերկել — հիրգիլ, կարկուտ — գ'արգօղ, ներկել — նիրգիլ, ոսկի — իսգա:

140. Բառամիջում կ բաղաձայնը և ռնգականից հետո դառնում է գ. տնկել — դինգիլ, ընկոյզ — ունֆայզ, ընկեր — ընգիր:

141. Բառավերջում կ բաղաձայնը և որնդականից հետո մնում է կ. ծունկ — ձօնկ, խունկ — խօնկ, եղունգ — ղօնկ, ճանկ — ջանկ, և առհասարակ գ, կ, ֆ հնչյունները բառավերջում և ռնգականից հետո դառնում են կ:

142. Բառավերջում, եթե կ բաղաձայնը չի նախորդում և ռնգականը, կ դառնում է ֆ. ծաղիկ — ձաղաֆ, տախտակ — ղախդիֆ, դատարկ — դարդիֆ, պտուկ — բուլօֆ, գիրկ — գ'էրֆ, մուկն — մօֆ, խակ — խօֆ, երէկ — իրիֆ, բարակ — պարիֆ:

Հ

143. Հ բաղաձայնը բառասկզբում մնում է անփոփոխ. հարս — հուրս, հարսանիք — հարսնաֆ, համրել — համբրիլ, հիանդ — հիվուտ, հրաշք — հրաշք, հաստ — հուտդ, հիսել — հիսսիլ, հագանել — հաֆնիլ, հուստել — հիդդիլ:

144. Բառասկզբի հ բաղաձայնը ընկել է հետևյալ բառերի մեջ. հալցցենի — անցցենի (ընկել է գ), հաւատալ — ավդիլ, հրճել — ընցիլ:

145. Բառասկզբի հ դարձել է խ. հող — խիղ, նույնն է պարագան նաև թյուրքերեն հախ — խիխ (իրավունք) բառի, որոնք այդպէս են դարձել ազդվելով հաջորդ բաղաձայնից:

146. Բառամիջում հ մնում է անփոփոխ. ջուկակ — ջրլիւիֆ, պահել — բիհիլ:

ուրի իգականակերտ մասնիկի մեջ հ պահում է իր երանգը, փոխվում է վերջի ի տառը. Տիգրանունի — Դիկրանունի:

147. Բառամիջի և բառավերջի հ բաղաձայնը երբ գտնվում է ուրիշ բաղաձայնի վողքին, ընկնում է հնչման հշտության համար. նաւապարհ — ջամբունֆ, շնորհատր — շրնրֆիր (ւ — ֆ), աշխարհ — ախշուր, շնորհ — շնիւրֆ:

148. Բառամիջի զարտուղի ձայնափոխումներ են. սահել — սիֆիլ (հ — ֆ), օրհնել — ուշնիլ (րհ — շ):

149. Բառավերջում ա ձայնավորից հետո հ մնում է անփոփոխ. շահ — շուհ, դահ — դուհ, մահ — մուհ (համաձայնակ), ահ — ահ:

150. Յուրահատուկ ձայնափոխում է սկիւն — սրգէն (հ — ն):

2

151. Չ բաղաձայնը բառասկզբում մնում է ձ. ձեռ — ձառ, ձուկ — ձօկ, ձմեռ — ձմիռ, ձի — ձէն, ձէք — ձիք, ձիւն — ձայն, ձիւրեհ — ձիւրեհա, ձագ — ձիւք, ձայն — ձան, ձմեռակ — ձմեռո՞ք, ձև — ձիւ, ձևել — ձիւլիլ:

Ջարտուղի ձայնափոխում է ձագար — զարար բառը (ձ — զ):

152. Բառամիջում և անդակներից հետո ձ դառնում է ց. բարձր — պուցքր, բանձր — բուցքր, պղինձ — բղինձ (մեծ կաթսա), անձրև — անցրիվ, խնձոր — խնցիր, տանձ — դուց, տանձենի — դանցինա, խանձել — խանցիլ:

153. Թե՛ բառամիջում և թե՛ բառավերջում և ղ բաղաձայններից հետո ձ դառնում է ց. դարձուցանել — դարցնիլ, դերձան — դիրցուն, դարձ — դուրց, հոգեդարձ — հիլլբրդուրց, արձակել — արցակիլ, բարձ — պուրց, դեղձ — դիլց, դեղձենի — դեղցինա:

154. Բառավերջում անկախ ձ պատահող մի բառի մեջ ձ մնացել է անփոփոխ. ալձ — օձ — ուձ:

3

155. Բառասկզբում պատահում է երկր բառ, որոնք հայերենում իրենց ունեցած ձայնավորը կորցրել են. ուղարկել — դուրգիլ — խուրկիլ, ուղեղ — դօղ (ոսկորի ծուծ), եղունգ — դօնկ:

156. Բառամիջում ձայնավորներից կամ թրթռուն բաղաձայններից հա և առաջ պատահելիս ղ մնում է ղ. գողանալ — կուլնիլ, դեղին — դիլէն, եղունգ — դօնկ, ժողովել — ժուլվիլ, լեղի — լիզա, մեղր — միլլըր, գիւլացի — կիլացա, տղայ — դղօ, ծաղիկ — ձաղաֆ:

157. Բառամիջում խուլ բաղաձայնից հո և կամ առաջ ղ դառնում է խ. բուղր — քօխա, խեղդել — խըխըիլ, նեղ — չիխք, մեղք — միխք, եղբայր — ախպար, աղբիւր — ախպայր, աղատ — ախուր:

Սեղմել բառը վերցվել է թյուրբերենից և սակայն ենթարկվել ալա կանոնին. սեղմել — սըխմըջինիլ:

158. Բառավերջում մեծ մասամբ ղ մնում է անփոփոխ. իղ — իղ, ասեղ — ասիղ, աղ — իղ, պաղ — բիղ, նեղ — նիղ, մաղ — միղ, մաղմաղ — մաղմիղ, մանգաղ — մանկիղ:

Աստղ բառը բարբառում գործածվում է նվազական մասնիկով, ներմուծելով ր. աստղ — արբասղաֆ:

159. Հետևյալ բառերի մեջ ղ դարձուղի ձայնափոխման է ենթարկվել. մժեղ — մուեօֆ (բնկել է ղ, ավելացել է ֆ), պղեհ — բըքիֆ (բնկել է ղ, ավելացել է ֆ), աղբիկ — աշգեհ (բնկել է ղ, չ դարձել է շ, ավելացել է ն):

Ճ

160. Ճ բաղաձայնը բառասկզբում դառնում է չ. ճանապարհ — չամբունք, ճանն — չանջ, ճիպո — չաբո, ճիղ — չօղ, ճեղք — չիղք, ճակատ — չագուր:

161. Բառամիջում և բառավերջում և դառնում է չ. աճել — իչիլ, խեղճ — խիղջ (միայն վերքի և հիվանդի համար) ճեղդուկ — չիճջրօֆ, ճանն — չանջ, կարճ — զարջ, կոճակ — գիւջիֆ, կուրճ — գըրէջ, մաճ — մաջ:

162. Ճ անփոփոխ է մնացել բառամիջին. վախճանել — վաղճանիլ (հոգևորականների մահանալ) բառի մեջ:

163. Բառամիջում թրթռուն բաղաձայնից առաջ և դառնում է ժ. կոճակել — գուժիլ, տաճկանալ — դիժգինիլ (սաստիկ ջղախնայ կամ կրոնափոխ լինել):

164. Բառավերջում բոլորն բառի մեջ և մնացել է անփոփոխ բոլորն (հում ձավարով ձաշ, փրցված կտոր):

Մ

165. Մ բաղաձայնը բառասկզբում միշտ մնում է անփոփոխ. մարդ — մուրք, մայր — մար, մտանել — մըննիլ, միս — մէս, մարգարէ — մարկարա, մօրս — մուրօֆ, մաշել — միշիլ, ման — մաշ, մանրել — մանւրըիլ, մեծ — մինձ, մեղք — միլք:

166. Բառամիջում մ նույնպես մնում է անփոփոխ. բոժմել — բիւմիլ, ամիս — ամէս, ձմեռ — ձմիռ, ամառ — ամուռ, շամիչ — շամէչ, կարմիր — գաւրմէր, համար — համուր:

167. Բառամիջում բացառությամբ է եղմբնալ — ուփրըվնիլ և եղումն — ուփրօմ, որտեղ մ — ն հանդիպումից մ դարձել է ֆ:

168. Բառավերջում մ մնում է անփոփոխ. դում — դըրքօմ, ժամ — ժում, համ — հում, սեւմ — սիւմ, սեւամ — շիւմ, մում — միւմ, կամ — գում, դէմ — դիւմ:

3

169. Բառասկզբում գտնվող յ կիսաձայնը ջնջվում է. եթե գտնվում է ձայնավորից առաջ, ձայնափոխվում է այդ ձայնավորը. յօնք — ունքվա, յօրանք — իրըզըղիլ, յեւակ — իղիվ, յետին — իլլէն:

Եթե հաջորդում է բաղաձայն, յ ջնջվելուց հետո ավելանում է մի այլ ձայնավոր, յըս—

տակ — իսպիտ, յստակել — իսպիտ, յի — տղա (միայն անասունների համար):

170. Միայն յիսուն բառի մեջ չ կիսաձայնը պահել է իր երանգը և հնչվում է կիսաձայն (ե) — յիսուն — յիսուս. նույնն է պարզան և յետ — յիդ բառի:

Յ-ի մյուս պարագաների մասին չենք խոսում, որովհետև արդեն այդ մասին խոսվել է երկբարբառների ձայնափոխման ժամանակ:

Ն

171. Ն բաղաձայնը բառասկզբում մնում է ն. նեղանալ — նիղանիլ, նոր — նիր, նեղ — նիդ, ներքև — ներքիվ, նստել — նսդիլ, նըշխար — նիշխուր, նուրբ — նօրփ, նուշ — նօշ, նորել — նիրիլ, նօւր — նուսր, նորահարս — նիրհուրս:

172. Նման բառի գործածությունը չկա բարբառում, իսկ նրանից կազմված բայերի՝ նման — նմանել — նմանեցուցանել կա, որտեղ ն — մ հանդիպումից և դարձել է լ և սկզբից վերցրել բ ձայնավորը. նմանել — ըլմանիլ, նմանեցուցանել — ըլմանցընիլ:

173. Բառամիջում և մնում է ն. ականջ — ականչ, կանաչ — գանաչ, անեն — ջանջ, մաղանի — մաղնա, ունենալ — ունընիլ, բնկոյգ — ունֆայգ, սպանել — ըսքանիլ, սանդալ — սանդուլ, սինձ — սէնց:

174. Բառամիջում երկու և իրար հաջորդելու դեպքում մեկն ընկնում է. անկանել — իյնիլ (ընկել է կ), կանգնել — գայնիլ (ընկել է գ), ցնկնել — ձիյնիլ (ընկել է կ): (Այս մասին տես և § 102-ում):

Բառամիջի ն-ն ընկել է և լնուլ — լըլիլ բայի մեջ, առաջի և վերջի լ տառերի ազդեցությամբ դարձել լ:

175. Բառավերջի ն-ն մնում է անփոփոխ ն. աման — ամուն, տուն — դօն, ֆան — ֆուն, երկայն — իրգան, շուն — շօն, մածուն — մացօն, պարան — բարուն, երեսուն — յարսօն, չուն — չլուն:

176. Գրաբարի մի խումբ բառերի բառավերջի ն-ն ընկնում է, սակայն ի հայտ է դալիս հոգնակիի, ածանցման, բայակերտման, հոլովման ժամանակ. մուկն — մօկ, — մգնիր

(հոգ.), տան — դուսր — դըսըմէֆ (ածանցում), ամառն — ամառ, յօթն — յոթթը, հարսն — հուրս, մատն — մուդ, երդումն — ուֆթօմ, դուռն — դօռ:

Սակայն մի բառի մեջ և մնում է բառավերջում շեշտելով անգիր ք-ն. քոռն — քուրք:

177. Բառավերջի ն-ն վերածվել է մ-ի մի բառի մեջ՝ մըշիւն — մըշօմ: Ակադեմիկոս Հ. Աճառյանի կարծիքով, դա մնացորդն է

հին հայերենի մըշիւմն ձևից և հոդի հապավումով³:

Ն բաղաձայնը մ է դարձել նաև մի այլ բառի բառամիջում՝ բօշնել — բիշմիլ:

178. Հետևյալ բառերի մեջ և բաղաձայնը ենթարկվել է դարտուղի ձայնափոխումների. խնջել — խմշիլ (ն—մ), կա նաև խնշիլ. քանապարն — ջամփունֆ (ն — մ), անալի — ալլա (հաջորդող լ-ից ազդվելով ն-ն դարձել է լ):

Շ

179. Շ բաղաձայնը բառասկզբում մնում է շ. շուն — շօն, շինել — շինիլ, շալիկ — շապակ, շարել — շարիլ, շերեփ — շիրփի, շաբար — շափուր, շահ — շուն, շալակ — շալիւֆ, շատ — շիւդ, շիլ — շէլ, շինծու — շինծօ:

180. Մի քանի բառի մեջ բառասկզբում շ բաղաձայնից առաջ ավելացել է մի ձայնավոր հնչման հեշտությամբ համար (տես § 125). ու՝ շուտ — ուշէդ. ի՝ շփել — իշփիլ — իշփրվիլ — իշփըցընիլ:

181. Բառամիջում շ մնում է շ. խարշել — իիշիլ, գիշեր — կիշիւր, աշուն — իշշօնֆ, կուշտ — կ'օշդ, կշռել — գիշըռիլ, փշրել — փըշրիլ:

182. Բառավերջում շ մնում է շ. էշ — իշ, քուշ — քօշ, անուշ — անօշ, փուշ — փօշ, նուշ — նօշ:

Միայն շարժ բառում բառամիջի ժ-ի ազդեցությամբ շ փոխվել է ժ-ի. շարժֆ — ժաժ (ընկել են r, f), որից ժիժիլ «ցնցել, շարժել»:

Չ

183. Բառասկզբում չ մնում է չ. չորս — չուրս, չոր — չիւր, չափ — չուփ, չորանալ — չիւրնիլ, չուխա — չուխօ, չոֆել — չոֆիլ:

184. Բառամիջում չ մնում է չ. կանչել — գինչիլ, կանաչել — կանչըրիլ, աղաչել — աղչիլ, չարչարանֆ — չարչարիւնֆ, չարչարել — չարչարիլ, փչել — փշիլ, հաչել — հիշշիլ:

Բացառություններ են՝ ամաչել — ամըշնիլ (չ — շ հաջորդ ուղղականի ազդեցությամբ), աչֆ — աշֆ (չ — շ). կա նաև աչֆ:

185. Բառամիջի չ ընկել է հետևյալ բայերի մեջ. դիպչել — դիպիլ, փակչել — փակիլ, փախչել — փախիլ:

186. Բառավերջում չ մնում է չ. փարչ — փարչ, չամիչ — չամէչ, ֆիչ — ֆէչ, կանաչ — գանաչ, խաչ — խաչ:

Բացառություն է ժամակոչ — ժամգից բառը (չ — ց):

3. Տես՝ Ակադեմիկոս Հ. Աճառյան, «Քննություն Պոլսո բարբառի», Նրևան, 1947 թ., էջ 56, § 169:

Պ

187. Բառակերպում պ դանում է բ. պա-
րան — բարուն, պակաս — բազուս, պագ —
բիւք, պառա — բառով, պաշար — բիշուր,
պատ — բուդ, պառա — բիւդ, պառու —
բղղիւր, պժգալի — բժգալա, պառառ — բա-
զուս:

188. Բառամիջում պ դանում է բ. շա-
պիկ — շաբաք, հապա — հաբօ, դիպէլ —
դիբիլ, տապակել — դարգիլ, ապուր — արօր:

189. Բառավերջում պ դանում է բ. ամպ — ումբ, պարապ — բարուր, կապ —
գուր, պապ — բուր:

190. Հանապարհ բառի մեջ ն ընդականի
ազգեցությամբ պ դարձել է փ. հանա-
պարհ — ջամփունք:

Յուրահատուկ ձայնափոխում է ապալի-
նել — ալավանիլ (հաջորդ վ-ի ազգեցու-
թյամբ պ դարձել է վ):

Զ

191. Բառակերպում զ մնում է զ. ջուր —
ջօր, ջորի — ջիւա, ջրհոր — ջրհիւր, ջուլ-
հակ — ջլնիկ, ջրաղաց — ջաղուց, ջով —
ջիվ:

Բացառություներ են (զ դարձել է ն)՝
ջաղել — ճարբիլ, ջայրել — ճիբիլ:

192. Բառամիջում զ դանում է զ. ոջիլ —
իշէլ, առաջեալ — առշիվ, քրջել — դրշիլ,
շրջել — շրշիլ, մրջիւն — մրշօն, հաջել —
հիշիլ:

193. Բառամիջում ն ընդականից հետո
պատահելիս զ մնում է զ. տանջել — դանջիլ,
երեւջ — իրէւջ, քնջուկ — քիւնջօկ, իջանել —
իջնիլ:

194. Բառավերջում զ դանում է զ. մէջ —
միշ, առաջ — առաշ, արջ — ուրշ:

195. Մէջք բառի մեջ զ դարձել է շ. մէջք —
միշք, որից բիշք՝ միանների մրսելուց կամ
ծանրությունից ցավելը:

Բ

196. Զերել-Մուսայի բարբառում երբեք
բառակերպում ո բաղաձայնով սկսվող բառ
չի պատահում. նույնն է պարագան և բ-ի
համար: Սա մնացել է հին հայերենից, որ-
տեղ, ինչպես հայտնի է, այդ տառերով
սկսվող բառերը շատ հազվադեպ են և ե-
ղածներն էլ փոխառություններ մի օտար
լեզվից: Բառակերպում ո-ով սկսվող հա-
տուկ անուններն անգամ սկզբից ստանում
են ր հենարանը. Ռերեկա — Ըոերեկա, Ռու-
բեն — Ըոուրեն, ռուս — րոս:

197. Բառամիջում ո մնում է ո. հեռու —
հիռոս, պառա — բառով, վառել — վառիլ,
վառեակ — վառիք, բառասուն — բառօն,
բոշել — բոռիլ, կշոն — գիշրոնիլ:

198. Ռ ձայնը հատկապես շեշտվում է ն
ընդականին հանդիպելիս. մոռնալ — մառ-
նիլ, խառնակել — խառնեցիլ, դառնալ —
դառնիլ, բոնել — պոնիլ, մեռնել — միռնիլ,
առնել — առնիլ:

Բացառություն է ծառագարդար — զար-
գարդուր, որտեղ հաջորդ բ-ի ազգեցությամբ
ո դարձել է ր:

199. Բառավերջում ո մնում է ո. ձեռ —
ձառ, ձմեռ — ձմիռ, ամառ — ամուռ, վար-
դավառ — վարրիվուռ, ծուռ — ձօռ, ծառ —
ծուռ:

Ս

200. Ս բաղաձայնը բառակերպում ձայ-
նավորից առաջ մնում է ս. սեալ — սիվ, սո-
վորել — սուրվիլ, սիրել — սիրիլ, սիսեռ —
սիսիռ, սիրտ — սիրդ, սեւմ — սիւմ, սատա-
կել — սարգիլ, սանդ — սոււնտ, սան — սուն,
սալ — սուլ, սողալ — սուղիլ:

201. Ս բաղաձայնը բառակերպում բաղա-
ձայնից առաջ վերջից կամ սկզբից ստանում
է մի ձայնավոր հենարան. սպանանել — քս-
բաննիլ, սպիտակ — իւրիւղիւք, սկեսուր —
քսգիւօր, սրբել — սրբիլ, սգաւոր — սրբա-
վիւր, սղութիւն — սրղութեն, սկիւն — սրգեն,
սկեսարայր — քսգարար:

202. Բացառություն է սեամ բառը, որը
դանում է շիմ, շիմք, ս — շ ձայնափոխ-
մամբ:

203. Բառամիջում ս մնում է ս. փեսայ —
փիւսօ, սիսեռ — սիսիռ, սանդ — ասիդ,
հաւն — քսուն, հառասուն — հառօն, երե-
սուն — յարօն:

204. Բառամիջի քս հանդիպումը տալիս է
քց. վարսուն — վարցօն:

Ասել բայի ս-ն կատարչայում տալիս է ց.
ացա, ացիր, ացունք, ացաք, ացեն:

205. Բառավերջում ս մնում է ս. չորս —
չուրս, ուս — օս, փոս — փիւս, ամիս — ա-
մէս, միս — մէս, լոյս — լայս, բոյս — պայս,
բորբոս — փորփէս:

206. Բառավերջի հետևյալ բառերի մեջ ս
դարձել է ց. ավետիս — ավիդից (և՛ հատուկ
անուն և՛ բարի լուր), ներքս — նրքցէ (ի ձայ-
նավորը տեղափոխվել է), դուրս — դուրքէ
(ավելացել է է, նրքէ բառի հետ ձայնական
ներդաշնակության համար):

(Շարունակելի)